ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 133

## ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև Քասախ համայնքի ավագանու 2001թվականի հոկտեմբերի 9-ի N13 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Սարգսյանի դիմումը՝* ***որոշում եմ***

Քաղաքացի Արթուր Մայիսիկի Սարգսյանին պատկանող 032-007 կադաստրային ծածկագրով 0.121 հա հողամասը (սեփականության վկայական թիվ 2378962) վերահասցեավորել և նախկին 2 թ. 17 փողոց N 7 հասցեի փոխարեն տրամադրել Մ. Սարյան փողոց թիվ 7 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. մայիսի 30
Գ.Քասախ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 134

### ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ)ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման 4-րդ կետի պահանջները, ինչպես նաև Գայանե Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտը*՝ որոշում եմ

1. «Գայանե Հովհաննիսյան» Ա/Ձ-ին համաձայն իր հայտում նշված ժամանակահատվածի՝ տրամադրել առևտրի օբյեկտում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

20 17 թ. մայիսի 30
Գ.Քասախ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 135

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ինչպես նաև քաղաքացի Հովհաննես Ասատրյանի դիմումը՝* որոշում եմ

1.Բավարարել քաղաքացի Հովհաննես Ասատրյանի դիմումը և թույլատրել Վ. Տերյան 4-րդ փողոց թիվ 4 հասցեում իրականացնել բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ, տրամադրել շինարարության թույլտվություն:

2. Հանձնարարել Քասախի համայնքապետարանի առաջատար մասնագետ Գ. Սիմոնյանին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

3. Պահանջել քաղաքացի Հովհաննես Ասատրյանից շինարարական աշխատանքներն սկսել միայն անհարժեշտ նախագծի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. մայիսի 31
Գ.Քասախ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 136

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումը, ինչպես նաև քաղաքացի Արթուր Սարգսյանի դիմումը՝* որոշում եմ

Բավարարել քաղաքացի Արթուր Մայիսիկի Սարգսյանի դիմումը և տրամադրել Մ. Սարյան փողոց թիվ 7 հասցեի հողամասում բնակելի տան կառուցման նախագծման թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

20 17թ. մայիսի 31
Գ.Քասախ